Մանրուքյուն.— 1. Առաջին տողի թուի(ն), կարող է լինել նաև թուի(ս):

2. Գրեցաւ ինձ պետք է հասկանալ ինձ հատկացվեց, ինձ վրա գրվեց:

Տարբերթերցում.— 1. Ջալ և նրանից արտագրողները երրորդ տողի ԺԳ (13) կարդացել են ԾԳ (53), Ժ գրի վերնամասի ձախակողմյան հորիզոնական զարդագծի պատճառով:

2. Որդի Աբասայ Ջալ և մյուսները կարդացել են՝ որդի Ամբատայ:

3. Առաջնորդ սբ ուխտիս Ջալ կարդացել է առաջնորդութեամբ սբ ուխտիս:

4. Ղրիմ արձ. վերջին բառերը չի կարդացել:

34. Մեծ ժամատան մեջ, նախորդի տակին

(Լուս. № 39)

Հ Զի Մ 1271

Հրատարակված է՝ Ջալ 20, Ղրիմ 46, Վիմ 113

1 Ի կամս բարերարին Այ, ես՝ որ Յոհէս, ծառա ծառա-
2 իցն Այ, առաջնորդ սբ ուխտին Հաղբատա, ըստ նախ-
3 նեց իմոց, մեծ յուսով միաբանեցա սբ Աստծնիս, էտ-
4 ու կազմել մեծ(ա)ծախ պահարանն աւադ սբ նշանին եւ էտու
5 Ը ոց վեծկի պատրաստութեա։ Սբ եղբարքս սահմանեցին
6 ինձ զտաւնսն Յովաննու նաւասարդին եւ զյինանցն յ-
7 իմ անուն պատարագել զՔս։ Որչափ կենդանի եմ հա(ա)ւ-
8 ըն Վաչէի եւ մաւր՝ Սանահին եւ յետ ելից իմոց ինձ։ Կատարի-
9 չքն աւրհնին յԱյ եւ խափանողքն դատին ի սէ։ Թվին Զի։

Մանրուքյուն.— 1. Երկրորդ և երրորդ տողերում Ըստ նախնե(ա)ց իմոց ասելով (իմ նախնիքների նման) Հաղբատա վանքի առաջնորդ տեր Հովհաննեսն ուզեցել է տեղի իշխանական տոհմից իր ծագումը շեշտել:

2. Հինգերորդ տողի Ը-ոց վեծկի պատրաստութեան գրերը թեև պարզ երևում են, բայց անհասկանալի լինելու պատճառով Ջալ բաց է թողել։ Այդ բառերից պետք է եզրակացնել, որ Հաղբատի վանահայրը, բացի խաչի մեծածախս պահարանից, Սանահնի վանքին է նվիրել նաև մի ուրնոց վեծկի (ճիշտ ձևը վեցկի) պատրաստի վիճակում:

Վեցկին հին ծանր արորն է, որ վեց կամ ավելի եզներով էին գործարկում։ Ուրնոց վեցկին ամենածանը, ուրը եզներով գործի դրվող արորն է, որ ամբողջովին փայտից էր շինվում, բացի խոփից, որ երկաթից էր լինում։

Սանահնին վեցկի է նվիրել նաև Սանահնի առաջնորդ Կիրակոսը 1264 թվականին (արձ. № 113)։

Տարբերթերցում.— 1. Ջալ չունի մեծածախ:

2. Ջալ չունի 5-րդ տողի Ը-ոց վեծկի պատրաստութեա:

35. Ներքին ժամատան գմբեթի հիմքի քիվի աե կողմի վրա

ԺԲ դարի երկրորդ կես

Հրատարակվում է առաջին անգամ

1 ԶԳրիգոր վարդապետս որդի
2 Տուտայ յիշեսջիք ի Քս Յի։